Սոյն պատասխանագրին հասնելուն յաջորդ Հինգշաբթի օրը (17 Յուլիս) Ս. Աստուածածնի եկեղեցիին մէջ ընդհանուր ժողով (սիւնհոդոս) կը գումարեն, ուր ներկայ կը գտնուին Խաչատուր Սեբաստացի, Մարտիրոս Դրիմեցի, Դաւթար Ստամպոլցի և Եղիազարի աշակերտ Իգնատիոս ու Կիրակոս վարդապետներ, Սիսի միաբան Խաչատուր եպիսկոպոս և Կ. Պոլսոյ իշխաններն ու աթոռականները։ Ժողովին մէջ կը կարդան Յակոբ կաթողիկոսի թուղթը ու կ'ըսեն. «Մենք բոլոր վարդապետներս քննութիւն կատարելով վերահասու եղանք Մուղնեցիի չարութեան ու արժան դատեցինք նզովել զայն և լուծել իր վարդապետական կարգէն ու քրիստոնէութենէ նոյն իսկ, բայց չըրինք այդ բանը, ու անոր արարքները տեղեկագրեցինք կաթողիկոսին, որ ինք բանադրէ ու կարգալոյծ ընէ զայն։ Կաթողիկոսը, սակայն, առ ոչինչ համարած է այդ ժողովը ու մեր թուղթը, որուն ներքև կնքած էինք բոլոր վարդապետներս ու վեց աթոռակալները»։ Ու դատաստանով սա վճիռը կու տան. «Որովհետև կաթողիկոսը մեզ կարևորութիւն չտալով այսպիսի գիր մը ղրկեր է, ուրեմն անիկա այլևս պէտք չէ մեզի, ու այսուհետև անոր անունը չյիշուի պատարագի մէջ»։ Այս վճիռին համաձայն՝ յաջորդ Շաբաթ օրէն (19 Յուլիս) սկսեալ կը դադրեցնեն Յակոբ կաթողիկոսի յիշատակութիւնը ու տեղը Ս. Լուսաւորչի անունը կը յիշեն։

Այս կարգադրութիւնը դիւր չի գար Եղիազարի հակառակորդներուն, որոնք կարևորութիւն չտալով ժողովի որոշման՝ կը ստիպեն իրենց կողմի քահանաներուն յիշատակել կաթողիկոսի անունը։ Եղիազար թէև անձամբ չի մասնակցիր յիշեալ ժողովին, բայց կասկած չկայ որ իր թելադրութեամբ շարժած էին ժողովականները, վասնզի ետքէն երբ անսաստող քա-